

## ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՔ Երկուշաբթի, 14 Ապրիլի, 2008

Շաբաթ, Ապրիլի 5-ին Նեվադայի Լաս Վեգաս քաղաքում տեղի ունեցած հանդիսաւոր արարողութեամբ հիմնադրուել է ԶՅԴ «Իշխան» կոմիտէութիւնը: Միջոցառումը նշանաւորուել է մասնաւորաբար 12 նորագիր դաշնակցականների երդման արարողութեամբ, որի բացումը կատարել է ԶՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի դաստիարակչական յանձնախմբի ատենապետ՝ Վահէ Պոզոյեանը: Նա հակիրճօրէն անդրադարձել է վերջին ամիսներին կատարուած դաստիարակչական աշխատանքներին եւ ապա 12 նորագիրներին հրաւիրել է տալու իրենց Դաշնակցականի երդումը: Այնուհետեւ ելոյթ է ունեցել ԶՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի անդամ ժամ Գոսազեանը, որը յանուն ծրագրի ամբողջացումը: Նա նաեւ նշել է, որ նորագիր ընկերները գալիս են միանալու վերջին տարիներին շրջանում հաստատուած տասնեակ այլ ընկերների եւ ըստ Զ.Յ.Դ. կանոնագրութեան, Կենտրոնական Կոմիտէն շրջանում հիմնում է «Իշխան» անուամբ նոր կոմիտէութիւն: Ապա նա ներկայացրել է օրուայ կնքաօրը՝ Զ.Յ.Դ. Բիւրոյի անդամ դոկտ. Վիգէն Յովսէփեանին, որի առաջնորդութեամբ 12 նորագիրները ակնածանքով մօտել են Դաշնակցութեան կարմիր դրօշին ու երդուել՝ պատուով ծառայելու հայութեան եւ Զայաստանի ազատագրութեան դատին: Սոյն արարողութեան առիթով, դոկտ. Յովսէփեանն ասել է, որ «դաշնակցականի երդումը ինքնանպատակ արարք չէ, եւ ոչ էլ դաշնակցական կոչումը ստանալու ու դրանով շրջապատի մէջ հպարտանալու առիթ: Դուք,- ասել է նա,- պարտաւոր էք ձեր երդումը եւ դաշնակցականի կոչումը իմաստաւորել մեր ժողովրդի, մեր հայրենիքի ու ձեր գաղութի ծառայութեան համար: Դաշնակցականի կոչումը ձեզ դնում է լուրջ եւ ծանր յանձնառութեան առջեւ, մասնաւորաբար երբ դուք գալիս էք միանալու նորաստեղծ կոմիտէութեան, այնպիսի մի գաղութի մէջ, որի առջեւ ծառայութեան ամսահման դաշտ կայ»: Երդման արարողութիւնից յետոյ տեղի է ունեցել ժողովրդային խրախմբանք:



Զ.Յ.Դ. Զիւստընի «Սերոբ Աղբիւր» կոմիտէութեան նախաձեռնութեամբ տեղի է ունեցել խրախմբանք-տօնակատարութիւն՝ Զ.Յ.Դ. հիմնադրութեան 117-րդ եւ Զիւստընում կոմիտէութեան հիմնադրման 33-րդ տարեդարձների առթիւ: Միջոցառումը սկսել է դրօշի արարողութեամբ, որը կատարել են Զայ Երիտասարդաց Դաշնակցութեան Զիւստոնի «Դրօ» ուխտի անդամները: Այնուհետեւ հնչել են ամերիկեան ու հայկական հիմներգերը, որոնք յոտընկայս ունկնդրուել են ներկայների կողմից: Միջոցառմանը ելոյթ է ունեցել Վրոյր Ֆրէնկեանը, որը իր բացման խօսքում մասնաւորապէս անդրադարձել է Զայ Դատի հետապնդման ու հայ ժողովրդի պահանջատիրութեան ուղղութեամբ «Սերոբ Աղբիւր» կոմիտէութեան ծաւալած բեղմնաւոր գործունէութեանը Զիւստընում: Այնուհետեւ նա բեմ է հրաւիրել կոմիտէութեան հիմնադիր Կարօ Յարութիւնեանին, որը լուսապատկերների ցուցադրութեամբ խօսել է կոմիտէութեան ստեղծման մասին, շեշտելով, որ 1975 թուականից ի վեր Զ.Յ.Դ. «Սերոբ Աղբիւր» կոմիտէութիւնը հաստատուն քայլերով շարունակում է իր առաքելութիւնը Զիւստընում:



Մարտի 29-ին, Միշըն Զիլզ քաղաքի «Ձորջ Դեօքմէջեան» սրահում տեղի է ունեցել «Սրբոց Նահատակաց» ազգային նախակրթարանի եւ «Ֆերահեան» միջնակարգ վարժարանի եւ Զայ Օգնութեան Միութեան «Աշխէն Փիլաւեան» մանկանստրի Դպրոցական խորհրդի կազմակերպած տարեկան ճաշկերոյթը, որի ընթացքում հանգանակուել է աւելի քան 100,000 դոլար: Սոյն գումարը ամբողջութեամբ յատկացուելու է դրամական օժանդակութիւն ստացող բազմաթիւ աշակերտների ֆոնդին եւ դպրոցի երկու համալիրներում կատարուող նորոգութիւնների աշխատանքներին: Աւելի քան 300 հիւրերի ներկայութեամբ սոյն միջոցառմանը ելոյթ է ունեցել «Ֆերահեան» ազգային վարժարանի տնօրէն՝ ժամ Գոսազեանը, որը հակիրճօրէն անդրադարձել է անցնող վեց տարիներին դպրոցի արձանագրած յաջողութիւններին: Զանդիսութեան աւարտին իր օրհնանքի խօսքն է ասել թեմի առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեանը:



Աւելի քան 300 հազար դոլար է հանգանակուել Կիրակի, Ապրիլի 13-ին Գլենդելում տեղի ունեցած հնգօրյա հեռուստամարաթոնի ընթացքում, որը կազմակերպել էր Հայկական Ոսկրածուծի Նուիրատուների արծանագրման հաստատութիւնը՝ արեան քաղցկեղից տառապող հայ հիւանդներին, մասնաւորաբար հայ երեխաներին օգնելու համար: Հանգանակուած գումարով հաստատութիւնը մտադիր է հիմնել բժշկական յատուկ կենտրոն՝ Երեւանում: Հեռուստամարաթոնը, որը ուղիղ երթերով հեռարծակուել է Գլենդելում գտնուող «Հորիզոն» հեռուստակայանից, պատկերասփռուել է նաեւ գաղութի հայկական չորս այլ հեռուստակայաններով ու Հայկական Ոսկրածուծի Նուիրատուների արծանագրման հաստատութեան կայքէջով:



Ջեկի Խանչալեան-Սփիրը Երեքշաբթի, Ապրիլի 8-ին կայացած ընտրութիւններում հեզասահ յաղթանակ է արծանագրել, հանդիսանալով երկրորդ ամերիկահայը՝ Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների պալատում: Մինչ այժմ տիկին Աննա Իշուն, դարծեալ՝ Հիւսիսային Կալիֆորնիայից, համարում էր Կոնգրէսի միակ ամերիկահայ անդամը: Ջաքի Սփիրը գրաւելու է վերջերս իր մահկանացուն կնքած կոնգրէսական Թամ Լանթոսի թափուր մնացած տեղը, որը ներկայացնում է Կոնգրէսի 12-րդ ընտրատարածքը: Տիկին Սփիրը ծնուել է 1950 թուականին Սան Ֆրանցիսկոյում: Բարծրագոյն կրթութիւնը ստացել է Սան Ֆրանցիսկոյի **University of California, Hastings College of the Law** համալսարանում, մասնագիտանալով իրաւաբանութեան բնագաւառում: 1978 թուականից ի վեր իր գործուն դերակատարութիւն է ունեցել ամերիկեան քաղաքական կեանքում, ստանծնելով պետական ուշագրաւ պաշտօններ ինչպէս տեղական, այնպէս էլ նահանգային մակարդակներով: 1998 թուականին ընտրուել է Կալիֆորնիայի նահանգային Սենատի անդամ: 2002 թուականին պաշտօնավարութեան երկրորդ ժամանակաշրջանով վերընտրուել է նոյն պաշտօնում, իր լայն ծառայութիւնը բերելով նահանգի բարգաւառման բազմաթիւ ծրագրերում ու աշխատանքներում: Պետական աշխատանքներին առընթեր, տիկին Ջեկի Սփիրը իր գործուն մասնակցութիւնն է բերում ամերիկահայութեանը յուզող աշխատանքներին, հիմնականում սատար կանգնելով Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցով Հայ Դատի Յանծնախմբի համաամերիկեան ջանքերին: Տիկին Սփիրը Երեքշաբթի օրուայ ընտրութիւններում շահել է քուէների շուրջ 80 տոկոսը: Նկատի ունենալով, որ նա նուաճել է քուէների աւելի քան 50 տոկոսը արդէն իսկ համարում է Կոնգրէսի անդամ, թէւ առաջիկայ Յունիսի 3-ին պէտք է մասնակցի նախընտրական, իսկ Նոյեմբերին համերկային ընտրութիւններին:



Հ.Մ.Ը.Մ.-ի Գլենդելի «Արարատ» մասնաճիւղի հիմնադրութեան 30ամեակի տօնակատարութիւնների շրջանակներում, Մարտ 30-ի երեկոյեան ժամը 5-ին, «Արարատ»ի կենտրոնում տեղի է ունեցել անցնող 30 տարիների վարչականների վերահանդիպման միջոցառումը: Մասնաճիւղի վարչականները անդրադառնալով միութեան 30-ամեայ ձեռքբերումներին ու նուաճումներին, կարեւորել են նոր սերնդին հայեցի դաստիարակութիւն տալու անհրաժեշտութիւնը եւ խօսել՝ այդ ուղղութեամբ առաջիկայ տարիներին կատարելիք աշխատանքների վերաբերեալ: Միջոցառմանը խօսուել է նաեւ այն ծրագրերի մասին, որոնք նախատեսուում են իրագործել մասնաճիւղի հիմնադրութեան 30-ամեակի տօնակատարութիւնների առիթով:

Այս լուրերը տրամադրում են  
**ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի**  
 Կեդրոնական Կոմիտէի  
 Հանրային Կապի Գրասենեակի կողմից  
**ARF Central Committee**  
**Office of Public Relations**  
**Contact Person: Saro Nazarian**  
[PublicRelations.ARF@hotmail.com](mailto:PublicRelations.ARF@hotmail.com)  
**Tel: (818) 243-7059**  
**Fax: (818) 243-1467**

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:  
 Լուրերը կարելի է վերահրատարակել: